

ՄԵԼԻՔՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԵՐՐՈՐԴ ԴԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՌԱՎԱՐԱԾ ՍԱՍԱՆՅԱՆ ԱՐՔԱՅԱԶՆՆԵՐԻ ՏԻՏՂՈՍԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Պատմագիտության մեջ Մեծ Հայքի III դարի Սասանյան կառավարիչների տիտղոսին մասնակի ուշադրություն է դարձվել: Ընդ որում, եթե մինչև անցյալ դարի 40-ական թվականները մատենագրական տվյալների և Սասանյան Ներսեհ արքայի Պայկուլեի արձանագրության՝ է. Հերցֆելդի հրատարակության հիման վրա հետազոտողները համերաշխ էին Մեծ Հայքի Սասանյան կառավարիչների «արքա» տիտղոսի շուրջ, ապա 1936 թ. Քաաբա-ի Ջարդուշտի պատերին Շապուհ I-ի եռալեզու արձանագրության (այսուհետ՝ ՏՅԿԶ) հայտնագործումից և նրա առաջին ընթերցումներից հետո կարծիքները սկսեցին բաժանվել: Մինչ օրս Հայաստանի Սասանյան կառավարիչների տիտղոսի և դրա իրավաքաղաքական նշանակության վերաբերյալ առաջադրվել են վարկածներ, որոնք, ցավոք, մի դեպքում չեն փաստարկվել, այլ դեպքերում ավելի քան վիճարկելի են:

Հոդվածում մենք կանդրադառնանք այն հարցին, թե ինչ տիտղոս են կրել III դ. Հայաստանում իշխող Սասանյան արքայազները, արդյո՞ք նրանք եղել են պարսից վեհապետներին հպատակ սովորական արքաներ, թե՞ տերության վարչական համակարգում նրանց դիրքը համահունչ է եղել պաշտոնական արվեստում կիրառված ձևերին: Այս հարցերի լուսաբանման հիմնական սկզբնաղբյուրը ցայսօր մնում է Վալերիանոս կայսեր դեմ Շապուհ I-ի տարած փառավոր հաղթանակի առթիվ 261/262 թ. ստեղծված ՏՅԿԶ-ն: Նրանում արքայից արքա Շապուհ I-ը կրոնական հաստատություններին արված նվիրաբերությունների և արքայատան անդամների անվան հավերժացման նպատակով հիմնածատրուշանների թվարկության կապակցությամբ հիշատակում է իր գահաժառանգ որդի Որմիզդ-Արտաշիրին (միջ. պարսկ. 22/23, պահլ. 17/18, հուն. 39/40 և 41-րդ տողեր), (*RBA MLKA*

'*rmnyn*)՝ «Մեծ արքա Հայոց»¹ տիտղոսով. «Մեկ արքունի, որ կոչվում է «Խոսրով Որմիզդ-Արտաշիր», ի հիշատակ և ի պահպանումն անվան Որմիզդ-Արտաշիրի՝ մեծ թագավորի Հայաստանի, մեր որդու...»²: Պարսից գահաժառանգը նույն տիտղոսով հիշատակվում է նաև վիճաբանի հետագա շարադրանքում արքայատան անդամների հոգու հավերժացման համար զոհաբերություններ սահմանելու առթիվ. «... 1000 ոչխարներից, որ զոհաբերել ենք արքունիներին, մենք պարվիրեցինք, որ [մարտիցվի օրական] մեկ ոչխար, մեկ ու կես մոդ հաց, չորս պասու գինի... մեծ արքա Հայոց Որմիզդ-Արտաշիրի ... և Որմիզդակի՝ հայոց թագավորի որդու... հիշատակի [հավերժացման] համար»³:

Թվում է, թե հնարավոր չէ երևակայել ավելի պաշտոնական և վստահելի աղբյուր, որը Հայաստանի Սասանյան կառավարչի տիտղոսը ներկայացնի ավելի լավ, քան ՏՅԶ-ն: Այդուհանդերձ, նրանում Որմիզդ-Արտաշիրի «Մեծ արքա Հայոց» (*RBA MLKA 'rmnyn*) տիտղոսի ընթերցման և նշանակության շուրջ առաջացել է բանավեճ: Վ. Հենինգը 1952 թ. հրատարակած մի հոդվածում առաջարկել է ՏՅԶ-ի միջին պարսկերեն «*wuzurg šāh Arminān*» և պահլավերեն «*wuzurg šāh Arminīn*» վերծանությունները սրբագրել «*Vazurg Armenān šāh*» - «Մեծ Հայքի թագավոր»⁴: Իր տեսակետը հիմնավորելու նպատակով հեղինակը հղում է Ներսեհի՝ Պայկուլեի արձանագրությունը (NPi), որտեղ Հայաստանի Սասանյան նախկին այս կառավարիչը, նրա ընթերցմամբ, կոչված է «*Vazurg Armenān šāh*»⁵:

Սկզբնապես Վ. Հենինգի տեսակետը պաշտպանում էր Ս. Երեմյանը, ով, Վ. Հենինգին հղելուց բացի, բերում է նաև լրացուցիչ փաստարկներ: Հեղինակը նշելով, որ Վ. Հենինգի «*Vazurg Armenān šāh*» ընթերցումը համապատասխանում է հունա-հռոմեական և հայ մատե-

¹ Միջին պարսկերեն՝ *wuzurg šāh Arminān*, պարթևերեն՝ *wuzurg šāh Arminīn*, հունարեն՝ *μεγάλος βασιλέως Ἀρμενίας*:

² Honigmann E. et Maricq A., *Recherches Sur les Res Gestae divi Saporis*, Bruxelles, 1953, pp. 40-41.

³ Նույն տեղում, էջ 48, 50:

⁴ Henning W. B., A Farewell to the Khagan of the Aq-Aqatārān, *The Bulletin of the School of Oriental and African Studies*, 1952, XIV/3, p. 517.

⁵ Նույն տեղում, էջ 517, ծան. 4:

նագրության հանրաձայնթ «Βασιλεὺς Μεγάλης Ἀρμενίας» - «թագաւոր Հայոց Մեծաց» տիտղոսին, եզրակացնում է. «Արտաշես Ա-ից (189-161) սկսած Հայկական թագավորության պաշտոնական անունն էր «Մեծ Հայք», իսկ նրա գահակալները մինչև 387 թ. կրում էին «թագաւոր Հայոց Մեծաց» տիտղոսը, ուստի բնական է, որ հայկական գահը բարձրացած Որմիզդ-Արտաշիրը պիտի կրեր այս տիտղոսը և ոչ թե «Արմենիայի (կամ Հայաստանի) մեծ թագավոր»⁶:

Ահավասիկ, անվիճելի է, որ I-IV դդ. հայոց արքաները կրել են «թագավոր Մեծ Հայքի» տիտղոսը: Բացի մատենագիրներից⁷, դա փաստում են նաև հայոց արքաների թողած պաշտոնական վիճագրերը⁸: Այդուհանդերձ, III դ. Հայաստանի Սասանյան կառավարիչ-

⁶ Երեմյան Ա., Նախշ-ի-Ռուստեմի «Քաարա ի Ջարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, ՊԲՀ, 1966, թիվ 2, էջ 64, ծան. 19: Հետագայում Ե. Հոնինգմանի և Ա. Մարիքի կողմից ՏՄՀ-ի վերընթերցման հիման վրա Ա. Երեմյանը հրատարակեց իր վերոնշյալ կարծիքից («Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, Երևան, 1984, էջ 49):

⁷ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ա. Կանայանցի, աշխ. թարգմ. և ծանոթ.՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, § 126: Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ՝ Մ. Արեղեան եւ Ա. Հարութիւնեան, Տփղիս, 1913, III, 23:

⁸ Այս տիտղոսի հունարեն «Βασιλεὺς Μεγάλης Ἀρμενίας» տարբերակն առկա է Տրդատ I-ի՝ Գառնիի (Մանանդյան Հ., Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 5: Սարգսյան Գ., Գառնիի հունարեն արձանագրության շուրջը, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1956, թիվ 3, էջ 48-49: Բարթեղյան Հ., Գառնիի հունարեն արձանագրությունը և Մովսես Խորենացին, ՊԲՀ, 1965, թիվ 3, էջ 231: Կրկյաշարյան Ա., Եվս մի անգամ Գառնիի հունարեն արձանագրության մասին, ՊԲՀ, 1965, թիվ 3, էջ 236), Բակուր Արշակունու՝ Հռոմում հայտնաբերված (Тревер К. В. "Очерки по истории культуры древней Армении (II в до н.э. - IV в н.э.)", Москва-Ленинград, 1953, стр. 237-242) և Տրդատ II-ի կամ Տրդատ III-ի՝ Ապարանի (Ростовцевъ М., Апаранская греческая надпись царя Тиридата, С.-Петербург, 1911, стр. 6) արձանագրություններում: Նույնը արամեատառ (MLK RB ZY 'RM[YN) տարբերակով ներկայացված է 1961 թ. Գառնիում հայտնաբերված և հավանաբար հայոց Խոսրով I-ի կողմից ստեղծված արձանագրության վրա (Периханян А. Г. "Арамейская надпись из Гарни". ՊԲՀ, 1964, թիվ 3, стр. 123):

ների տիտղոսի վերաբերյալ Վ. Հենինգի մեկնաբանությունը տեղիք է տալիս լուրջ առարկությունների: Նախ, ՏՅԿ-ի երեք տարբերակներում այս տիտղոսը վիճաբանված է ոչ թե մեկ անգամ, որը կարելի էր վերագրել քանդակագրողի անփութությանը կամ անգիտությանը, այլ երկիցս, ինչը, ինքնուրուիքյան, վերացնում է ՏՅԿ-ի տողերը սրբագրելու խնդիրը: Բացի դրանից, Վ. Հենինգի վարկածի դեպքում սպասելի էր արձանագրության հունարեն տարբերակում Որմիզդ-Արտաշիրի տիտղոսը տեսնել «*τοῦ βασιλέως Ἀρμενίας μεγάλου*», մինչդեռ այստեղ էլ այն ներկայացված է «*τοῦ μεγάλου βασιλέως Ἀρμενίας*» ձևով, ինչը նույնական է միջին պարսկերեն և պահլավերեն տարբերակների «Մեծ արքա Հայոց» գրությանը: Ընդ որում, ինչպես Ս. Կրկյաշարյանն է նկատում, խնդրո առարկա տարրնթերցումներում «արական սեռի *του μεγάλου* (մեծի) ածականը ոչ մի դեպքում չի կարող վերաբերել իգական սեռի *Ἀρμενίας* գոյականին. այն կարող է վերաբերել բացառապես արական սեռի *βασιλέως* (թագավոր) գոյականին, քանի որ հունարենում գոյականի և ածականի սեռային համապատասխանությունը քերականական պարտադիր օրենք է»⁹:

Բացի վերը նշվածից, սկզբունքային առարկություններ է հարուցում նաև Ներսեհի՝ Պայկուլեի արձանագրությանը Վ. Հենինգի կատարած հղումը: Այսպես, հեղինակն օգտվել է է. Հերցֆելդի կողմից 1924 թ. այս արձանագրության առաջին նախնական հրատարակությունից, որտեղ շատ բաներ դեռևս վարկածային, հետևաբար՝ վիճարկելի էին: Սակայն Հ. Համբակի և Պ. Օ. Սյարվոյի կողմից 1983 թ. Հիշյալ արձանագրության վերընթերցմամբ տարակարծություններ գրեթե չեն մնում. նրանում 276-293 թթ. Հայաստանի պարսկական մասում կառավարած Ներսեհն իրեն կոչում է ոչ թե «*Vazurg Armenān šāh*», ինչպես որ կոչված է Որմիզդ-Արտաշիրը ՏՅԿ-ում և իր վեհապետության սկզբներին թողարկած դրամների վրա¹⁰, այլ պարզապես «*lmn'n*

⁹ Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի պետական կարգը (մ.թ.ա. VI - մ.թ. IV դդ.), Երևան, 2005, էջ 122:

¹⁰ Հիշյալ դրամների դարձերեսին դրոշմված է *mzdysn bgy 'whrmzdy RB MLK rmn'n*...= Մազդային երկրպագող, տիրակալ Որմիզդ, Մեծ թագավոր Հայոց»: Ուսումնասիրողներից ոմանք, վեհապետական այս դրամների վրա նախկին տիտղոսի առկայությունը փաստարկելով, կարծում են, որ դրանք Որմիզդ I-ի

ML[KA]»= «Հայաստանի թագավոր»։ «Ես Հայաստանի արքան էի և մնում էի Հայաստանում...»¹¹։ Մյուս կողմից՝ բնավ արդարացված չէ Որմիզդ-Արտաշիրի և Ներսեհի տիտղոսների միջև զուգահեռներ անցկացնելը, քանի որ այդ երկուսը Հայաստանում կառավարել են տարբեր ժամանակահատվածներում, երբ միանգամայն այլ էր Սասանյան տերության ռազմավարչական համակարգում Հայաստանին վերապահված դերը։

Պատմագիտության մեջ հպանցիկ անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի Սասանյան կառավարիչներին տրված «Մեծ արքա Հայոց» տիտղոսի իրավաքաղաքական նշանակությանը։ Ս. Երեմյանի համոզմամբ հայոց գահին Սասանյան գահաժառանգներին նստեցնելով՝ «Տիգրանի արքունիքը իրագործում էր իր վաղեմի քաղաքական ծրագիրը՝ Հայաստանում հաստատել Սասանյան դինաստիայի ժառանգական իշխանությունը, ինչպես առաջ, երբ Մեծ Հայքը Արշակունիների «երկրորդ թագավորությունն էր» (*Secundogenitur*). այժմ այդ նույն դերը վերականգնվում էր, սակայն իբրև Սասանյան դինաստիայի երկրորդ թագավորություն»¹²։ Դ. Մ. Լանգի կարծիքով պարսից արքունիքը, նվաճված Հայաստանի կառավարումը Սասանյան գահաժառանգներին հանձնելով և նրանց «Մեծ թագավոր Հայոց» տիտղոսով մեծարելով, ցանկացել է վերջիններիս ներկայացնել իբրև տապալված Արշակունիների իրավահաջորդներ¹³։ Ինքնատիպ, բայց և ինչ-որ առու-

կողմից թողարկվել են նախքան 273 թ. մարտին տեղի ունեցած նրա պաշտոնական թագադրությունը (Луконин В. Г., Культура Сасанидского Ирана. Иран III-V вв., Москва, 1969, стр. 101)։ Սակայն նույն դրամների երեսին Որմիզդ I-ի՝ անձնական թագով պսակված լինելու փաստն ու թիկունքին վեհապետական խորհրդանշանի առկայությունը ժխտում են այդ վարկածը։

¹¹ Humback H. and Skjaervø P. O., The Sasanian Inscription of Paikuli, Part 3.1., Wiesbaden, 1983, §§ 3; 13; 35. Անտեսելով վերոնշյալ փաստը՝ ցայսօր բազմաթիվ ուսումնասիրողներ Ներսեհին են վերագրում «Հայաստանի մեծ արքա» տիտղոսը (Луконин В. Г., նշվ. աշխ., էջ 116; Daryaee T., Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, London, New York, 2009, pp. 10-11; Дашков С. Б., Цари царей: Сасаниды, Москва, 2008, стр. 89)։

¹² Երեմյան Ս., Նախշ-ի-Ռուստեմի «Քաարա ի Ջարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները Հայաստանի մասին, էջ 66։

¹³ Lang D. M., Iran, Armenia and Georgia, The Cambridge History of Iran, Ed. by I.

մով նույնիսկ զավեշտական է Որմիզդ-Արտաշիրի «Մեծ արքա Հայոց» տիտղոսի վերաբերյալ Շ. Շահբազի մեկնաբանությունը, ըստ որի՝ պարսից գահաժառանգին այն շնորհվել է պարզապես «հպատակեցված հայերի հպարտությունը բավարարելու» նկատառումով¹⁴:

Ակնհայտ է, որ վերոնշյալ բոլոր դեպքերում անտեսվել կամ թերագնահատվել են տիտղոսի՝ որպես վարչաիրավական կյանքի իրողության դերն ու նշանակությունը: Տիտղոսը պետական համակարգում այն կրող անձի պաշտոնական դիրքի ցուցիչն էր, նրա իրավասությունների շրջանակները որոշող հիմնական գործոնը: Դա հավասարապես վերաբերում է Սասանյան վարչաքաղաքական համակարգում ծնված «Մեծ արքա Հայոց» տիտղոսին: Այդ համակարգի պարզ քննությունն իսկ ցույց է տալիս, որ խնդրո առարկա տիտղոսը ոչ թե հայոց մեջ ձևավորված դարավոր ավանդույթը շարունակելու ցանկությամբ կամ էլ պարտված հայերին բարոյապես քաջալերելու, նրանց պատվախնդրությունը շոյելու նպատակով է ստեղծվել, այլ ծնվել է իրանական տերության վարչաքաղաքական կյանքի հրամայականից: 260-ական թթ. Սասանյան տերության վարչական համակարգի՝ ՏՅԿԶ-ում ներկայացված համայնապատկերն այլ կարծիքի տեղ չի թողնում:

«Եվ ես (Շապուհ I-ը - Ա. Մ.) տիրում եմ [հետևյալ] երկրներին (միջ. պարսկ. *hštr*, պարթ. *khšatr*)¹⁵՝ Պարսք, Պարթևստան, Սուգիանա, Մեսեն, Ասորեստան, Ադիաբենե, Արաբիա, Ատրպատական, Հայաստան, Իբերիա, Մախեդոնիա (պարթ. *sykn*), Առան (Աղվանք), Բաղասական և ավելի հեռուն, ընդհուպ մինչև Կապ լեռ (Կովկաս) և Ալանաց դարպասներ և Պարեշխվարի (Էլբրուս) ողջ լեռները, Մարաստան,

Gershevitch, vol. 3(I), 2000, p. 517.

¹⁴ Shahbazi Sh., Shapur I i, History, Encyclopedia Iranica, Originally Published: July 20, 2002.

¹⁵ Մ. Բակը «hštrdr»-ը թարգմանում է «թագավորներ» (Back M., Die sassanidischen Staatsinschriften. Acta Iranica 18, Téhéran-Liège, 1978, p. 289), մինչդեռ Ֆ. Ժիյուն (Gignoux Ph., Clossaire des Inscriptions Pehlevies et Parthes, L., 1972 (CII. Supplementary Series.Vol. I), p. 34, 53) և Էդ. Խուրշուդյանը (Хуршудян Эд. "Государственные институты Парфянского и Сасанидского Ирана". Алматы. 2015, стр. 71) պաշտպանում են ավանդական թարգմանությունը՝ «կառավարիչ»:

Վրկան (հուն.՝ Գուրգան), Մերվ, Հերաթ, ողջ Ապարշահրը, Կրման, Սակաստան, Թուրան, Մեկրան, Փարադան, Հինդ, Քուշանշահր, ընդհուպ մինչև Պաշկաբուր և ավելի հեռու՝ մինչև Կաշագարի լեռները, Սողդ և Չաչ, իսկ ծովի մյուս կողմում՝ Օման: Եվ այդ բազմաթիվ երկրներն ու երկրների կառավարիչներին (միջ. պարսկ. *hštrdr*, պարթև. *khšatrdār*, հուն. *δεσπότης τῶν ἔθνων*) և կողմերի կառավարիչներին (միջ. պարսկ. *pāygōsān*, պարթև. *ptykwspn*, հուն. *τῶν ἐκ παντὸς μέρους*) բոլորին դարձրինք մեզ հարկատու և հպատակ»¹⁶:

Անշուշտ, Շապուհ I-ի «բոլորին դարձրինք մեզ հարկատու և հպատակ» արտահայտությունն այնքան էլ ճշգրիտ չի արտացոլում Սասանյան տերության կազմավորման ընթացքը. իրականում այն ձևավորվել էր ոչ թե Շապուհ I-ի, այլ Արտաշիր I-ի ջանքերով և ոչ միայն նվաճումների և հարկադրանքի, այլ նաև Արշակունիների գահակալությունից դժգոհ իրանական կիսանկախ երկրամասերի հպատակ արքաների, իրանական ազդեցիկ տոհմերի ու քաղաքային ինքնավարությունների՝ Սասանյանների շուրջը կամովին համախմբվելու միջոցով, ինչը նորաստեղծ տերությանը նկատելի չափով դաշնային բնույթ էր հաղորդում: Եվ չնայած Արտաշիր I-ի կառավարման վերջերից, հատկապես Շապուհ I-ի գահակալության ընթացքում տարվող կենտրոնացման գործընթացին, մասնավորապես տերության կազմի մեջ կամովին մտած երկրների տեղական դինաստիաներին Սասանյան արքայազներով փոխարինելու իրողությանը՝ այնուամենայնիվ իրանական այս տերությունը մինչև վերջ էլ մնաց Սասանյան վեհապետի իշխանության ներքո համաբանվող և տարաստիճան ինքնավարություն վայելող շահրերի, կողմերի ու համայնքների մի բարդ համակարգ:

Սասանյան տերության վարչական սուբյեկտների ինքնավարության աստիճանը և դրանց ղեկավարների գործառույթներն առ այսօր հստակ չեն: Այնուամենայնիվ, Ֆ. Ժինյուն տարատեսակ աղբյուրագիտական նյութերի հիման վրա Սասանյան տերության ողջ տարածքում զանազանում է արքայական իշխանության՝ իրավաքաղաքական բովանդակությամբ խիստ տարբեր երեք մակարդակներ՝ արքայից արքա

¹⁶ Հմմտ. Sprengling M., *Third century Iran, Sapor and Kartir*, Chicago, 1953, pp. 14-15.

(*šāhanšāh*), մեծ արքա (*wuzurg šāh*) և հպատակ կամ վասալ արքաներ (*šahrdārān*)¹⁷: Արքայական իշխանության այս եռաստիճան համակարգում «Մեծ արքա Հայոց» տիտղոսի նշանակությունը պարզելու առումով յուրօրինակ բանալի է այն փաստը, որ մինչև III դ. երրորդ քառորդը այդ տիտղոսը վերապահվում էր բացառապես Սասանյան գահաժառանգներին: Այդ հանգամանքն իսկ հուշում է, որ խնդրո առարկա տիտղոսի իրավաքաղաքական նշանակությունը կարելի է ըմբռնել միայն գահաժառանգության տոհմական (նահապետական) սկզբունքի հաղթահարման ուղղությամբ առաջին Սասանյան տիրակալների քաղաքականության համատեքստում: Ինչպես երևում է, սկսած Արտաշիր I-ից, ուղղակի գահաժառանգության սկզբունքի արմատավորման համար կիրառվել են նախորդ իրանական հարստություններից յուրացրած երկու հիմնական մեխանիզմներ: Նախ՝ գահաժառանգի համար հանրային ճանաչում ապահովելու նպատակով պաշտոնական ժայռաքանդակների վրա նրան էր վերապահվում «արքայից հետո երկրորդ»-ի դիրքը¹⁸ պատկերագրության լեզվով հայտարարելով, թե ում հետ է արքան կապում արքայական իշխանության օրինականությունը, հասարակական կարգերի կայունությունն ու Իրանի փառքի շարունակականությունը: Ակնհայտ է, որ Արտաշիրը յուրացրել էր նաև իրանական բանակի գործնական ղեկավարությունը թագաժառանգներին հատկացնելու միջոցով նրանց տերության կյանքին անմիջականորեն հաղորդակցվելու, ապագա տիրակալի համար ռազմաքաղաքական գործունեության անհրաժեշտ փորձ ապահովելու պարթևական մեխանիզմը¹⁹: Ինչ վերաբերում է «Մեծ արքա» տիտղոսին, ապա կարծում ենք, որ այն դարձյալ երևան է հանվել Սասանյան տերության նվիրապետական համակարգում Սասանյան վեհապետին հպատակված տեղական դինաստիաների ու հատկապես առանձին երկրամասերի կառավարիչ-արքաներ նշանակված Սասանյան արքայազների միջավայրում գահաժառանգի «արքայից հետո երկրորդ»-ի դիրքությունն ապահովելու

¹⁷ Gignoux Ph. Court and Courtiers II. In the Parthian and Sasanian Periods, Elr, 1993, Vol. VI, Fasc. 4, p. 360.

¹⁸ Մելիքյան Ա., Սալմաստի ժայռաքանդակը. պատմական Հայաստանի սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն, Երևան, 2016, էջ 105-115:

¹⁹ Նույն տեղում, էջ 106-115:

նպատակով: Փաստորեն, որպես գահաժառանգի քաղաքական գովազդի միջոց, այն լրացնում էր ուղղակի գահաժառանգության սկզբունքի քաղաքական քարոզչության վերը նշված երկու միջոցները և ծառայում Սասանյան գահի նկատմամբ անցանկալի հավակնությունները կանխելուն:

Արված դիտարկումներից բնականաբար հարց է առաջանում. արդյո՞ք Որմիզդ-Արտաշիրն առաջինն էր, որ կրել է «Մեծ արքա Հայոց» տիտղոսը: Սրա պատասխանը միանշանակ է. այն դրդապատճառները, որոնք երևան էին բերել «մեծ արքա» տիտղոսը, գոյություն ունեին ոչ միայն Շապուհ I-ի օրոք, այլև նրանից առաջ՝ Արտաշիր I-ի կառավարման ժամանակ, երբ Սասանյան տերության դաշնային բնույթը շատ ավելի զգալի էր, իսկ գահաժառանգության հարցը՝ ավելի վիճահարույց²⁰: ՏՃԶ-ում Արտաշիր I-ի արքունի ցուցակը բացում են չորս արքաներ (*šahrdārān*). «Ահա նրանք, որոնք ապրել են արքայից արքա Արտաշիրի իշխանության ներքո. Սատրապ՝ Ապրենակի արքա, Արտաշիր՝ Մերվի արքա, Արտաշիր՝ Կրմանի արքա, Արտաշիր՝ սակերի արքա...»²¹: Համաձայն ընդունված կարծիքի՝ Արտաշիր I-ի արքունի ցուցակում հիշատակված չորս արքաներից միայն երկուսը՝ Ապրենակի արքա Սատրապն ու Կրմանի արքա Արտաշիրն են, որ Արտաշիր I-ի գահակալության վերջերին դեռևս ներկայացնում էին տեղական հարստությունները: Ուսումնասիրողները մյուս երկուսին նույնականացնում են Արտաշիր I-ի համանուն եղբոր և որդու հետ²²: Հնարավոր է, որ Արտաշիր I-ի հպատակ տեղական արքաների թիվն իրականում ավելի մեծ է եղել, բայց ՏՃԶ-ում տեղ են գտել նրանցից ամենապատվավորները: Չի բացառվում նաև, որ նրանցից առավել թույլերը ժամանակի ընթացքում կուլ են գնացել Արտաշիր I-ի կենտրոնաձիգ քաղաքականությանը²³, և ՏՃԶ-ն արձանագրել է նրա գա-

²⁰ Նույն տեղում, էջ 102:

²¹ ՏՃԶԻՎ, 6b. See Sprengling M., *Third Century Iran...*, p. 18.

²² Hinz W., *Altiranische Funde und Forschungen*, Berlin, 1969, S. 142; Frye R.N., *The Political History of Iran Under The Sasanians*, CHI, vol. 3 (I), Cambridge, 2000, p. 120):

²³ Մշխա Ջեխան Արտաշիր I-ին կամովին հպատակված արքայիկներից հիշատակում է երկուսին՝ Քարքա-Սլոխի արքա Դոմիտիանոսին և Ադիաբենեի

հակալուրջայան վերջերին գոյություն ունեցած վարչական պատկերը: Ամեն դեպքում դրանից ո՛չ վաղ սասանյան տերության դաշնային բնույթն էր փոխվում, ո՛չ էլ գահաժառանգության հարցի հրատապությունը: Տաբարին հաղորդում է, որ Արտաշիրի «...եղբայրներից ...ոմանք ավելի տարեց էին, քան ինքը: Այնուամենայնիվ, նրանք բուլորը հավաքվելով բերեցին թագն ու արքայական գահը, առաջարկեցին այն Արտաշիրին»²⁴: Սակայն դա կարելի է որակել իբրև Պարսքում իշխանության զավթման գործում Արտաշիրի դերակատարության ընդունման ակտ, ինչը բնավ էլ չէր կանխորոշում արքայական իշխանության հետագա ճակատագիրը: Ինչպես նկատում է Վ. Լուկոնինը, Սասանյաններն իշխանության էին եկել որպես տոհմ, և, հետևաբար, գահաժառանգության հարցում որքան որ նահապետական սկզբունքը պետք է դիտվեր որպես հարցի օրինական լուծում, նույնքան էլ ուժեղ պետք է լիներ այդ սկզբունքը շրջանցելու վեհապետի ցանկությունը²⁵:

Արտաշիր I-ի օրոք Սասանյան նվիրապետական համակարգում

արքա Շարհատին (Մշիխա Ջեխա, Ադիաբենեի եկեղեցու պատմություն, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ.՝ Հ. Գ. Մելքոնյանի: Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Ասորական աղբյուրներ, հ. 8, Երևան, 1976, էջ 82-83): Բայց մի փոքր անց նա նշում է. «Պարսիկների առաջին արքա Արտաշիրը մեր երկիր ուղարկեց մի կառավարիչ, որն Ադորգահադ էր կոչվում» (նույն տեղում, էջ 84):

²⁴ The History of al-Tabarī (Ta'rikh al-rusul wa'l-mulūk): The Sāsānids, the Byzantines, the Lakhmids and Yemen. Transl. and annotated by C. E. Bosworth, Albany, New York, 1999, pp. 8-9.

²⁵ Վաղ Սասանյանները չունեին գահաժառանգության համընդհանուր ճանաչում գտած սկզբունք: Այսպես կոչված «Թանսարի նամակ»-ում Իրանի նոր գահակալի ընտրության իրավունքը վերապահված է զրադաշտական քահանայապետի (mowbedān mowbed), դպրապետի (dabīrbed, dibīruft) և սպարապետի (spāhbed) խորհրդին՝ քահանայապետի կարծիքի գերապատվության պայմանով: Սակայն վաղուց է ցույց տրվել, որ պետության կառավարման համար զանազան տեսական և գործնական խորհուրդներ, ինչպես նաև բարոյական կանոններ պարունակող այս ստեղծագործությունը գրվել է Խոսրով I-ի օրոք՝ 557-570 թթ., և միտումնավոր վերագրվել է Արտաշիր I-ի նշանավոր մոգպետ Թանսարին (Луконин В. Г., նշվ. աշխ., էջ 104-106: “The Letter of Tansar”, translated by M. Boyse, Roma, 1968):

գահաժառանգին «Մեծ արքա» տիտղոսով մեծարելու իրողությունը հաստատում են նաև գրավոր և պատկերագրական տվյալները: Նախևառաջ դրա օգտին է խոսում «Մանիի Քյոլնյան ժողովածուն», որի հաղորդմամբ 240 թ. ապրիլի 12-ին Արտաշիր I-ի գահաժառանգ որդին՝ Շապուհը, հոր կողմից «ավագ դիադեմայով» պսակվելուց (կառավարչակից հայտարարվելուց) առաջ կրել է արքայական տիտղոս և հետևաբար՝ «կրտսեր դիադեմա»²⁶: Ըստ այդմ՝ կասկածից վեր է դառնում այն, որ գոյություն է ունեցել ինչ-որ մի տարածք, որտեղ Շապուհի արքայական տիտղոսը ներդաշնակել է տերության գահաժառանգի կարգավիճակին և դրա հետ կապված զորապետական գործառույթին: Մեր խորին համոզմամբ Շապուհի արքայական իշխանությունը կայացել է մասնավորապես Հայաստանի հարավային՝ Տավրոսյան լեռնաշղթայի երկայնքով ձգվող Անգեղտուն (*’Ιγγηλή*), Մեծ

²⁶ Herichs A. and Koenen L., Ein grieshischer Mani-Codex, Zeitschrift für Papyrologie und Epigraphik V, (Bonn, 1970), S. 120; Henrichs A., The Cologne Mani Codex Reconsidered, Harvard Studies in Classical Philology, Vol. 83, 1979, pp. 339-367; Sundermann W., Studien zur kirchengeschichtlichen Literatur der iranischen Manichäer I, Altorientalische Forschungen, 1986, 13, S. 49. Շ. Շահբազին, հետևելով Ա. Հեյնրիխսին և Լ. Կյոենենին, Մանիի «ավագ (կամ մեծ) դիադեմա» արտահայտությունը փակագծերում պարզաբանում է իբրև «royal –արքայական դիադեմա» (Shahbazi Sh., Shapur I i, History), ինչը մեր կարծիքով այնքան էլ ճիշտ չէ: Ի տարբերություն պարթևական ժամանակների՝ Սասանյան դարաշրջանում դիադեման ուներ կիրառության անհամեմատ նեղ սոցիալական շրջանակ: Այժմ նրա առկայությունը ցուցում էր ոչ թե այն կրողի ազնվագարնությունը կամ պետության վարչական համակարգում ունեցած բարձր դիրքը, այլ արքայական աստիճանը: Այս տեսանկյունից տրամաբանական կլինի Մանիի հիշատակած «ավագ դիադեմա»-ն վեհապետական իշխանության խորհրդանիշ, իսկ ինքնըստինքյան հասկացվող «կրտսեր» կամ «փոքր» դիադեման՝ հպատակ կամ կախյալ արքաների արքայական տարբերանշան համարելը: Սասանյան դարաշրջանի աստվածային և արքայական ինվեստիտուրային տեսարաններում վեհապետական և հպատակ արքայական իշխանության բովանդակությունների տարբերությունն արտահայտվում էր նաև «իշխանության օղակ»-ների արտաքին տեսքով. առաջին դեպքում դրանք զարդարված են երկու ծալքազարդ ժապավեններով, մինչդեռ հպատակ արքաներին հանձնվող օղակները զուրկ են ժապավեններից:

Ծովք (*Σοφηνή*), Արզան (*Ἀρζανηνή*), Կորդուք (*Καρδοουηνή*), ինչպես նաև վերջինիս սահմանակից Ծավդեք (*Ζαβδικηνή*) երկրամասերում, որոնք, համաձայն այսպես կոչված «Տիգրանակերտի հունարեն արձանագրության», ասորի մատենագիր Մշիխա Ջեխայի «Ադիաբենեի եկեղեցու պատմության» և Հայաստանի պատմական աշխարհագրության տվյալների, պարսիկների կողմից բռնազավթվել էին տակավին 220-230-ական թթ.²⁷: Հայկական երկրամասերի վրա Շապուհի գահակալության օգտին ամենաձանրակշիռ փաստարկը տալիս է Մեծ Հայքի Ջարեհավան գավառում՝ Սալմաստից ոչ հեռու, ստեղծված ժայռաքանդակը: Այս հուշարձանի համակողմանի քննությանը նվիրված մեր մենագրության մեջ հիմնավորապես ցույց ենք տվել, որ այն պատկանում է ինվեստիտուրայի ժանրին և ստեղծվել է 272 թ. Հայաստանի Սասանյան կառավարիչ Որմիզդ-Արտաշիրի կողմից²⁸: Հուշարձանի վրա պատկերված են Սասանյան առաջին երկու տիրակալների կողմից իրենց գահաժառանգներին արքայական իշխանությամբ պսակելու միանման տեսարաններ, որոնք իրարից չտարանջատելու պատճառով դիտորդների և նույնիսկ ուսումնասիրողների շրջանում մեկ կոմպոզիցիոն ամբողջականության տպավորություն են ստեղծել: Ժայռաքանդակի աջակողմյան պատկերախմբում հեծյալի դիրքով պատկերված է Արտաշիր I-ը, իսկ նրա դիմաց կանգնած է Շապուհը՝ մազերի ինքնատիպ ուռուցիկ հարդարանքով և իրանական հագուստով: Երկուսն էլ պատկերված են աջ ձեռքերն իրար մեկնած, մի դիրքով, որը կատարելապես համապատասխանում է սասանյան ինվեստիտուրային քանդակների «տալու-ստանալու» պատկերագրական սխեմային: Ճիշտ է, քանդակագործը փոխանցվող առարկան «թաքցրել է» Արտաշիրի ձիու գլխի հետևում, սակայն Սալմաստի ժայռաքանդակի երկու պատկերախմբերի ընդհանուր սիմետրիայից կարող ենք ենթադրել, որ, ինչպես աջակողմյան պատկերախմբում, այստեղ ևս Արտաշիրի կողմից գահաժառանգին հանձնվող առարկան օղակ է: Ընդ որում հատկանշական է, որ այն ժապավենազուրկ է՝ նման Սասանյան վեհապետների կողմից իրենց հպատակ արքաներին շնորհվող կամ էլ Սասանյան

²⁷ Մելիքյան Ա., նշվ. աշխ., էջ 120-125:

²⁸ Նույն տեղում, էջ 163-166:

գահաժառանգների կողմից ի տես հանվող օղակներին: Իսկ քանի որ օղակը ոչ թե ինվեստիտուրայի ծեսում իրապես շնորհվող պատվանշան էր, այլ այդ ծեսի գեղարվեստական կերպավորման ժամանակ գործածվող խորհրդանշական տարր²⁹, միանգամայն արդարացված կլինի այն շնորհելու տեսարանը Մանիի ինքնակենսագրության մեջ ակնարկված «կրտսեր դիադեմայով» թագադրության պատկերագրական համարժեքը համարելը³⁰:

Իհարկե, որոշ հակասություն է առաջանում այն առումով, որ ՏՅԿ-ի Արտաշիր I-ի արքունի ցուցակում արձանագրության հեղինակ Շապուհ I-ը իրեն չի հիշատակել որպես հպատակ երկրի թագավոր: Տեսականորեն դա կարելի է բացատրել նրանով, որ Հայաստանի մեծագույն մասն Արտաշիր I-ի օրոք մնում էր աննվաճ, և իրեն «Հայաստանի մեծ թագավոր» տիտղոսով հիշատակելու դեպքում նա ոչ միայն կմեղանջեր «ճիշտ խոսքի» զրադաշտական պատգամից, այլև ընթերցողին կզցեր մոլորության մեջ: Բավական է հիշել, որ ՏՅԿ-ից շուրջ 30 տարի անց ստեղծված Պայկուլեի արձանագրության մեջ էլ արքայից արքա Ներսեհը, դարձյալ ընթերցողին թյուրիմացության մեջ չզցելու նկատառումով, խախտել է գահակալության առթիվ իրեն շնորհավորելու եկած կառավարիչների ու դեսպանների թվարկման ձևական սկզբունքը և Տրդատ III Արշակունուն հիշատակել է միայն «արքա» տիտղոսով՝ առանց նշելու նրա ներկայացրած երկիրը³¹. չէ՞ որ այս դեպքում էլ Մեծ Հայքի արևելյան՝ մեծագույն մասը գտնվում էր պար-

²⁹ von Gall H., The Figural Capitals at Taq-e Bostan and the Question of the so-called Investiture in Parthian and Sasanian Art, Silk Road Art and Archaeology I, 1990, p. 107.

³⁰ Սովորական ինվեստիտուրայի ժանրով ստեղծված ցանկացած անշարժ հուշարձանի պարագայում անխզելի կապ գոյություն ունի նրա տեղադրության և ներկայացրած իրադարձության միջև: Այս օրինաչափության տեսանկյունից Մեծ Հայքի Զարեհավան գավառում Իրանի գահաժառանգ Շապուհի՝ արքայական իշխանությամբ օժտվելու տեսարանի կերտման փաստը կարելի է համարել Հայաստանի հետ նրա արքայական իշխանության ուղղակի կապի անվիճելի ապացույցը (Մելիքյան Ա., Սալմաստի ժայռաքանդակը..., էջ 119):

³¹ Humbach H. and Skjaervø P.O., The Sassanian Inscription of Paikuli, Part 3.1, § 92.

սից տիրապետության ներքո, և Տրդատ III-ի՝ Մեծ Հայքի արևմտյան մասում ունեցած «արքա» տիտղոսը նրա վրա չէր տարածվում³²: Այսուհանդերձ, մեզ ավելի հավանական է թվում երկրորդ բացատրությունը. ՏՃԶ-ում արքայից արքա Շապուհ I-ը կարող էր և չհիշել «Հայաստանի մեծ արքայի» իր անցյալ կարգավիճակը, մանավանդ, որ այն ածանցված էր եղել Իրանի գահաժառանգի ու զորահրամանատարի իր համապետական կարգավիճակին և ստվերվել էր այն մեծ փառքով ու հեղինակությամբ, որ նա ձեռք էր բերել 230-ական թթ. վերջերից՝ Վերին Միջագետքում և Ասորիքում ծավալված ռազմական գործողությունների ժամանակ: Այս վարկածի օգտին է խոսում այն փաստը, որ ՏՃԶ-ի Արտաշիր I-ի արքունիքի թվարկության մեջ Շապուհին իրեն ընդհանրապես չի հիշատակում: Սակայն դրանից չի հետևում, թե Իրանի գահաժառանգի և փաստացի զորահրամանատարի դերն ու նշանակությունն այն աստիճան ցածր են եղել, որ նա դուրս է մնացել պաշտոնական ցուցակից: Ընդհակառակը, դա հաստատում է մեր այն դրույթը, որ Շապուհին իբրև գահաժառանգ, ստորադասված լինելով Արտաշիր I-ին, միևնույն ժամանակ գերադաս դիրք է զբաղեցրել Իրանի վեհապետին ենթակա ամբողջ նվիրապետական համակարգի նկատմամբ: Այս իրողությունն իր հետաքրքիր արտահայտությունն է ստացել Արտաշիր I-ի՝ Փիրուզաբադ II ժայռաքանդակի վրա: Այստեղ Արտաշիր I-ից անմիջապես հետո պատկերված է արքայի հովհարակիրը, որով և առաջին հայացքից, խաթարվել է գահաժառանգի «արքայից հետո երկրորդ»-ի դիրքը: Սակայն քանդակագործն աստիճանակարգության հնամենի կանոնից կատարված շեղումը հաջողությամբ շտկել է չափական հարաբերության միջոցով՝ հովհարակրին պատկերելով անհամեմատ փոքր, քան հաջորդող երեք պատկերները: Վերջիններիս հագուստից և հատկապես գլուխների հարդարանքից պարզորոշ երևում է, որ նրանք պատկանում են Սասանյան արքայատանը: Նրանց մեջ Շապուհը, ով նույնականացվում է, շնորհիվ սաղավարտին քանդակված զինանշանի, ներկայացվել է առաջ, քան Արտա-

³² Մելիքյան Ա., Տիգրանակերտի հունարեն արձանագրության ժամանակի և նշանակության մասին, Բանբեր Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի, 2008, 3, էջ 142:

շիր I-ի համանուն եղբոր և որդու՝ Մերվի և Սակաստանի արքաների հետ նույնականացվող մյուս երկու պատկերները: Պատկերների գծային դասավորության պարագայում, հստակ արտահայտված դիրքային առավելությունից զատ, Շապուհի գերապատվությունը նրանց նկատմամբ արտահայտված է նաև իշխանության նշանների միջոցով. Շապուհը կրում է ծոծրակին արված հանգույցից կախ ընկած երկար ժապավեններով դիադեմա, մինչդեռ մյուս երկուսը, որոնք ՏՅԿZ-ում հիշատակվում են արքա (šahrdār) տիտղոսով, ներկայացվել են պարթևական ժամանակների «սատրապական» դիադեմաներով³³:

Այսպիսով, վերը կատարված մեր դիտարկումները ցույց են տալիս, որ «մեծ արքա» տիտղոսը երևան է եկել գահաժառանգության հիմնահարցի կարգավորման նպատակով, ինչը և պարզորոշ արտացոլվել է Որմիզդ-Արտաշիրի ստեղծած Սալմաստի ժայռաքանդակի վրա³⁴, իսկ հետագայում, ժամանակի և միջավայրի որոշ այլափոխմամբ, արձանագրվել է նաև Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ում³⁵: Սակայն պետք է նկատել, որ որքան էլ մեծ լինի Սասանյան գահաժառանգների՝ «Մեծ արքա Հայոց» տիտղոսի «Մեծ» մակդիրը Հայաստանին վերագրելու գայթակղությունը, այնուամենայնիվ, նրա մեջ իրապես տիտղոսի նշանակություն ունի «Մեծ արքա»-ն: Այն կապվում

³³ Մելիքյան Ա., Սալմաստի ժայռաքանդակը. պատմական Հայաստանի սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն, էջ 132, 133, նկ. 42:

³⁴ Ներկայացնելով նախ Արտաշիր I-ի կողմից թագաժառանգ Շապուհին, ապա և արքայից արքա Շապուհի կողմից իրեն՝ Որմիզդ-Արտաշիրին, «Մեծ արքա Հայոց» կարգելու ծեսերը՝ Որմիզդ-Արտաշիրը դիտողներին փորձել է ներշնչել այն միտքը, թե «Երանի ու Աներանի» գահին կարող է նստել միայն նա, ով դեռևս նախորդ տիրակալի կողմից ճանաչվել է որպես «մեծ արքա Հայոց»: Ընդ որում ժայռաքանդակի երկու պատկերախմբերի միջև որևէ դեկորատիվ տարանջատում չանելով (ինչը հասկանալի կդարձներ երկու իրադարձությունների տարբեր ժամանակային չափումները)՝ պատվիրատուն փաստորեն իր գաղափարը ներկայացրել է շարժանկարի սկզբունքով, որպես թե ի սկզբանե եկող և սահուն դեպի ապագան գնացող մի կարգ, որի մեջ կարող են փոփոխվել միայն անունները, բայց ոչ երբեք գործող անձանց դիրքն ու դրանից բխող հարաբերությունը (Մելիքյան Ա., նշվ. աշխ., էջ 164):

³⁵ Ագաթանգեղոս, §18. «... զի որ Հայոց թագաւոր էր՝ նա էր երկրորդ Պարսից տէրութեանն...»:

էր գերազանցապէս գահաժառանգի անձի հետ, իսկ նրա կառավարման ներքո գտնվող երկիրն այնքանով, որքանով որ այն իր սահմանային դիրքով պարսկական զորքի կենտրոնատեղին ու գահաժառանգ-զորապետի ոստանն էր: Հետևաբար, եթե հարկ լինի անդրադառնալ Սասանյան վարչաքաղաքական համակարգում այս կամ այն երկրամասի արտոնյալ դերին, ապա խոսքը ոչ թե «*secundogenitur*» - «երկրորդ տերության», այլ «*secundigentum*» - «(արքայից հետո) երկրորդ երկրի» մասին է: Այն ոչ թե ստատիկ, այլ տերության արտաքին քաղաքականության առաջնահերթությունների փոփոխություններին ներդաշնակող դեր էր կատարել³⁶:

Շապուհ I-ի վախճանից հետո՝ 272 թ. ապրիլի կեսերին, Հայոց Մեծ արքա Որմիզդ-Արտաշիրը բազմեց Սասանյան գահին³⁷: Հետևե-

³⁶ Այս առումով չի կարելի համաձայնել Թ. Դարյաիի հետ, ով, «Մեծ արքա Հայոց» կապակցության մեջ «Մեծ» մակդիրը վերագրելով Հայաստանին, նշում է. «Սասանյան կայսրության մեջ ոչ մի այլ նահանգ չի ունեցել նման կարևոր տիտղոս» (Daryaee T., Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, London-New York, 2009, p. 8):

³⁷ Պատմագիտության մեջ Շապուհ I-ի վախճանի և հետևաբար՝ Որմիզդ I-ի գահակալության թվագրումները տարբերվում են երեք տարով: Ս. Տազիզադեհն Շապուհի մահը թվագրում է 273 թ. ապրիլի կեսերով (Taqizadeh S. H., The Early Sasanians. Some Chronological Points which Possibly Call for Revision, BSOAS, vol. 11, 1943-1946, pp. 41-42; Taqizadeh S. H., Henning W. B., The Dates of Mani's Life, Asia Major, vol. 6, 1958, p. 116): Նրա թվագրումն ընդունում է նաև Գ. Վիդենգրենը (Widengren G., Manichaeism and its Iranian Background, in CHI, ed. by E. Yarshater, Vol. 3 (2). p. 970): Վ. Հենինգն այդ իրադարձությունները ժամանակագրում է 270 թ. մայիս ամսով (Haloun G. and Henning W. B., The Compendium of the Doctrines and Styles of the Teaching of Mani, the Buddha of Light, AM, vol. 3, 1952, pt. 1, p. 199): Վ. Հենինգի կարծիքը պաշտպանում են նաև Շ. Շահբազին (Shahbazi Sh., Shapur I) և Թ. Դարյաին (Daryaee T., նշվ. աշխ., էջ 10): Վ. Հինցն Իրանում կատարված իշխանափոխության թվականը համարում է 272 թ. (Hinz W., Mani and Kardēr, in Atti del convegno internazionale sul tema la Persia nel medioevo (Roma, 31 marzo - 5 aprile 1970), Accademia Nazionale dei Lincei. Anno CCCLXVIII - 1971. Quaderno N. 160. Roma, Accademia Nazionale dei Lincei, quaderno 160, Rome, 1971, p. 486): Այս թվականն են ընդունում նաև Մ. Շեյեգանը (Shayegan M. R., Hormozd I, Elr, vol. XII, Fasc. 5, p. 462), Վ. Լուկոնինը (Луконин В. Г. "Варакран II и

լով պապի և հոր օրինակին՝ նա «Հայաստանի Մեծ թագավոր» նշանակեց հարազատ որդուն՝ Որմիզդակին: Որմիզդ I-ի այս որդին ՏՃԶ-ում առաջնորդում է Շապուհ I-ի թոռների շարքը³⁸: Որմիզդակին Շապուհ անվամբ որպես Հայաստանի կառավարիչ հիշատակում է նաև Մ. Խորենացին³⁹: Քանի որ մինչև 272 թ. մարտ՝ մինչև իր պատոնական թագադրությունը, Որմիզդ I-ն իր դրամների վրա կրում է «Մեծ թագավոր Հայոց» տիտղոսը, ուրեմն՝ Որմիզդակի նշանակումը կատարվել է դրանից հետո: Սակայն, Պատմահոր հաղորդման համաձայն, Որմիզդակ-Շապուհը Հայաստանում կառավարել է ընդամենը մեկ տարի՝ 273/274 թթ.: Գրավոր աղբյուրներում և սասանյան վիճակագրություն նրա անունն այլևս չի հիշատակվում, ինչից էլ ենթադրում են, որ նա մահացել է տակավին երիտասարդ: Ավելի հավանական է, որ նա զոհ է գնացել իրանական ազնվականության և զրադաշտական կղերի նյութած դավադրությանը դեռևս հոր կենդանության օրոք⁴⁰:

Ցավոք, հայտնի չէ՝ Որմիզդ I-ը արդյոք ունեցել է այլ որդիներ, թե՞ ոչ: Վ. Գ. Լուկոնինը Շապուհ I-ի՝ ՏՃԶ-ում հիշատակված թոռներից Որմիզդ I-ի որդին է համարում նաև Վարահրանին⁴¹, թեև արձանագրության մեջ Շապուհի թոռների հիշատակության կարգը թույլ չի տալիս վստահել այդ կարծիքին: Բայց եթե անգամ Վ. Գ. Լուկոնինի վարկածը ճիշտ է, Որմիզդ I-ի այդ ենթադրյալ որդին հազիվ թե հասցրած լինի Հայաստանի գահին փոխարինել մահացած կամ սպանված եղ-

Нарсе". (Иран в 70-90-е годы III в.), Вестник древней истории, 1964, N 1, стр. 49), Ռ. Ֆրայը (Фрай Р. Н., Наследие Ирана, Москва, 2002, стр. 369, прим. 3), Պ. Կրեյենբրոկը (Kreyenbroek P.G., How Pious Was Shapur I?: Religion, Church and Propaganda under the Early Sasanians, in The Sasanian Era: The Idea of Iran, Vol. III, p. 7), Կ. Ֆարոխը (Фаррох К. "Персы. Армия великих царей". Москва, 2009, стр. 205) և այլք:

³⁸ ՏՃԶ, IV, 5.«... Որմիզդակի՝ Հայաստանի արքայի որդու, Որմիզդի, Որմիզդակի, Օդարախտի, Վարահրանի, Շապուհի, Պերոզի՝ Մեսենի արքայի որդիների...» (Sprengling M., Third century Iran, Sapor and Kartir, Chicago, 1953, p. 18):

³⁹ Խորենացի Մ., II, ՀԷ:

⁴⁰ Մելիքյան Ա., նշվ. աշխ., էջ 172:

⁴¹ Луконин В. Г. "Культура Сасанидского Ирана", стр. 103.

բորը, որովհետև կարճ ժամանակ անց անհայտ հանգամանքներում վախճանվեց, կամ, որ շատ հավանական է, իրանական ընդդիմության դավադրության զոհը դարձավ նաև Որմիզդ I-ը: Իսկ դրանից հետո նրա ուղղակի ժառանգի թեկնածությունը հայոց գահին պետք է որ մերժվեր, քանի որ դա կհակասեր ոչ միայն ուղղակի գահաժառանգության գործող կարգին, այլև Որմիզդ I-ին թշնամացած իրանական ավագանու և զրադաշտական հոգևորականության քաղաքական գծին:

Պատմագիտության մեջ տարածված կարծիքի համաձայն՝ Հայաստանում Որմիզդակից հետո կառավարել է Շապուհ I-ի կրտսեր որդին՝ Ներսեհը, որը ՏՅԿԶ-ում հիշատակվում է որպես «Սակաստանի, Թուրանի և Հնդկաստանի, մինչև ծովի ափերը» ընդարձակ շահրի արքա⁴²: Սակայն ո՛չ գրավոր աղբյուրները, ո՛չ էլ պարսից տեղական ներքին քաղաքական կյանքի մասին պատկերացումները հավատ չեն ներշնչում այդ վարկածի նկատմամբ: Ընդհակառակը, Որմիզդ I-ից հետո Իրանի կրոնաքաղաքական կյանքում հաստատված status quo-ի մասին տվյալները հիմք են տալիս կարծելու, որ 273/274-276 թթ. Հայաստանը կառավարվել է Վարահրան I-ի որդու՝ Վարահրանի (ապագա Վարահրան II) կողմից: Ամենայն հավանականությամբ այդ լուծու-

⁴² Ա. Երեմյանի կարծիքով Շապուհ I-ի որդի Ներսեհը 273 թ. «Հայաստանի մեծ արքայի» գահը խլել էր Որմիզդակից՝ Տիգրանի վեհապետական գահին տիրանալու հույսով («Հայ ժողովրդի պատմություն», ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. II, Երևան, 1984, էջ 59): Կ. Թումանովի կարծիքով Ներսեհին Հայաստանի գահին է նստեցրել ինքը՝ Որմիզդ-Արտաշիրը, 273 թ. (Toumanoff C., *The Third Century Armenian Arshacids. A Chronological Commentary. Revue de études Arméniennes. N VI, 1969, p. 257*): Ա. Մարտիրոսյանը ևս Հայաստանի գահին Որմիզդակի անմիջական հաջորդ է համարում Ներսեհին, միայն թե այդ փոփոխությունը թվագրում է 275 թ. (Մարտիրոսյան Ա., Հայաստանը և առաջին Սասանյանները, ՊԲՀ, 1975, թիվ 3, էջ 163): Վ. Գ. Լուկոնինի և Շ. Շահբազիի կարծիքով Որմիզդ I-ի մահվանից հետո Ներսեհը թեպետ Վարահրան I-ի գահակալությանը նայում էր իբրև ուզուրպացիայի (բռնատիրում), այնուամենայնիվ համակերպվել է կայսրության մեջ երկրորդի դրությանը՝ դառնալով «Մեծ թագավոր Հայոց» (Луконин В. Г., *Варакран II и Нарсе, (Иран в 70-90-е годы III в.), стр. 48 и сл.. Shahbazi Sh., Bahrām I, Elr, 2012, Vol. III, Fasc. 5, pp. 514-522*):

մը կազմել է Շապուհի ավագ որդու՝ Վարահիրանի և մոգպետ Կարտիրի ու նրա համախոհների միջև կայացած համաձայնության մի մասը, և ծանրակշիռ զիջումների դիմաց զրադաշտական կղերն ու իրանական պահպանողական ազնվականությունը համաձայնել են ոչ միայն Վարահիրանի գահակալությանը, այլև Հայաստանի կառավարչի պաշտոնում նրա որդու նշանակմանը: Սակայն գահաժառանգ Վարահիրանը «Մեծ արքա Հայոց» տիտղոսը պետք է որ կրած լինի ընդամենը մի քանի տարի:

276 թ. Պրոբոս կայսեր հետ Վարահիրան I-ի կնքած հաշտության պայմանագրից⁴³ հետո պատերազմի հավանականությունը պարսկահռոմեական սահմաններում վերացավ և, դրանով պայմանավորված, Հայաստանը կորցրեց իրանական զորքի հենակայանի և այդ զորքի հրամանատար պարսից գահաժառանգի ոստանի նշանակությունը⁴⁴: Այնուհետև Սասանյանների ռազմաքաղաքական ակտիվության սլաքը թեքվեց դեպի Արևելք, և բնականաբար գահաժառանգի ոստանի և պարսկական զորակայանի դերն անցավ տերության արևելյան՝ «Սակաստանի, Տուրեստանի և Հինդի մինչև ծով» շահրիին⁴⁵: Իրանի արտաքին քաղաքականության մեջ կատարված հիշյալ շրջադարձից հետո արքայից արքա Վարահիրան I-ի գահաժառանգ որդին՝ Վարահիրանը, նշանակվեց «Սակաստանի մեծ արքա», իսկ Վարահիրան I-ի կրտսեր եղբայր Ներսեհը տեղափոխվեց Հայաստան: Ս. Դաշկովի կարծիքով Հայաստանը Ներսեհին է տրվել որպես արքայից արքայի գահի շուրջ պայքարում նրան շրջանցելու հատուցում⁴⁶: Սակայն հազիվ թե կարելի է այդ մեկնաբանության հետ համաձայնել, քանի որ այդ նոր նշանակումը, ոչինչ չտալով Ներսեհին, ավելի էր խամրեցնում Տիգրանի գահին հասնելու նրա տեսլականը: Այս առումով հատկանշական է, որ Հայաստանի կառավարչի պաշտոնում նա կրում էր ոչ թե «Մեծ արքա Հայոց», այլ «*mzdysn nrshy MLK'* - Մարզդային երկըր-

⁴³ Historia Augusta, with an English Translation by David Magie, Vol. I-III, London, VII edition, 1991, Prob. 17-18: Խորենացի Ա., II, ՀԷ:

⁴⁴ Մելիքյան Ա., Տիգրանակերտի հունարեն արձանագրության ժամանակի և նշանակության մասին, էջ 34, 35:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Дашков С.Б., նշվ. աշխ., էջ 89:

պագող Ներսեհ արքա» համեստ տիտղոսը⁴⁷:

Գահաժառանգ Վարահրանի պաշտոնավարությունն իբրև «Սակաստանի Մեծ արքա» պետք է որ ձգված լինի ընդամենը մի քանի ամիս, քանի որ հոր վախճանից հետո՝ 276 թ., նա անարգել բազմեց Տիգրանի վեհապետական գահին: «Հայաստանի արքա» Ներսեհը, ով Վարահրան I-ի մահվանից հետո տոհմական իրավունքի տեսանկյունից դարձել էր Սասանյան գահի միակ լիիրավ թեկնածուն, ոչ միայն չվիճարկեց Վարահրան II-ի գահակալությունը, այլև մինչև 290-ական թթ. անհաղորդ մնաց Իրանական տերության ներքաղաքական եռուզեռին: Դրա պատճառը, թերևս, այն էր, որ պաշտոնական Տիգրանի նկատմամբ քաղաքական ընդդիմությունը ղեկավարում էին այլ անձինք՝ սկզբում Մեսենի արքա Շապուհը՝ Շապուհ I-ի վաղամեռիկ որդու՝ Մեսենի նախկին արքա Շապուհի որդին, իսկ մրա ապստամբության ճնշումից հետո՝ նրա որդին՝ Որմիզդը: Երբ վերջինս Վարահրան II-ի դեմ անհաջող ապստամբությունից հետո հեռացվեց ասպարեզից, «Հայաստանի թագավոր» Ներսեհը բացեիբաց սկսեց հավակնել արքայից արքայի գահին: Դրա արտահայտությունն առաջին հերթին Հայաստանում նրա կողմից ոսկյա դրամների թողարկումն էր, որով բացահայտորեն խախտվում էր արքայից արքայի մենաշնորհը: Ընդ որում Հայաստանի կառավարչի պաշտոնում Ներսեհի թողարկած առաջին տիպի ոսկյա դրամների դիմերեսին պատկերված են Ներսեհն ու նրա կինը, իսկ լեգենդը ներկայացնում է Ներսեհի անունն ու տիտղոսը՝ «Մազդային երկրպագող, [աստվածներից] սերող արքա Ներսեհ»: Իսկ դարձերեսին պատկերված է «Ներսեհի կրակ (ատրուշան)ը»: Ներսեհի պատկերն արքայի, այլ ոչ թե արքայից արքայի թագով, ինչպես նաև դրամի քաշը, որը կրկնակի պակաս է վեհապետական դինարի քաշից, թույլ է տալիս դրանք վերագրել 290-ական թթ. սկզբներին, այսինքն՝ Ներսեհի կողմից պետական հեղաշրջման նախապատրաստության շրջանին⁴⁸: Դրամների երկրորդ տիպում, որն արդեն վերաբերում է Տիգրանի գահի համար Ներսեհի բացահայտ

⁴⁷ Луконин В. Г. "Культура Сасанидского Ирана", стр. 180.

⁴⁸ Луконин В. Г. "Варахран II и Нарсе", стр. 57.

պայքարի շրջանին՝ 292-293 թթ.⁴⁹, նա պահպանել է իր նախկին տիտղոսը, սակայն պատկերվել է արքայից արքայի պատվանշաններով: Անգամ Վարահիրան III-ի ու նրա կողմնակիցների դեմ գոտեմարտից առաջ և նույնիսկ նրանց նկատմամբ տարած վճռական հաղթանակից հետո Ներսեհը շարունակում է կրել «Հայաստանի արքա» տիտղոսը: Ավելին, Պայկուլեի ու Տիգրանակերտի արձանագրությունների զուգադիր քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ արքայից արքայի գահին բազմելուց և Հայաստանի պարսկահպատակ մասը կառավարման իրավունքով Տրդատ III Արշակունուն հանձնելուց հետո էլ Ներսեհն ինչ-ինչ պատճառներով պահպանել և վեհապետական տիտղոսի հետ համադրել է իր նախկին տիտղոսը: Այսպիսի եզրակացության օգտին խոսող միակ փաստը, ցավոք, այն է, որ արքայից արքայի գահին բազմելու առթիվ շնորհավորելու եկած արքաների ու կառավարիչների թվում Ներսեհը «Հայաստանի թագավոր» չի հիշատակվում⁵⁰:

MELIQYAN ARTHUR

ABOUT THE TITLE OF SASANYAN PRINCES RULED IN ARMENIA IN THE 3RD CENTURY

Our exploration shows that the ruling of Sasanyan crown princes in Armenia was one part of Sasanyan 1st ruler's policy for solving the problem of the succession of the throne. Choosing the crown in the way of monopoly the Sasanyan king of kings did their best to strenghten their smart sets positions as much as they could. For the transference of the throne they chose the types of iconography preaching used in earlier Achaemenid Empire with the military-administrative mechanisms used in Parthian empire. The title of "Great King of Armenian" given to the

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Մելիքյան Ա., Տիգրանակերտի հունարեն արձանագրության ժամանակի և նշանակության մասին, էջ 142:

Sasanyan crown princes served the same aim.

In it “The Great King” had the honor’s meaning which referred predominantly to the crown and, it also referred to Armenia in a way that with its bordering position it was the garden of the heir of crown prince and the central place for the army.

The role of Armenia in the Sasanyan administrative system was not static; it was conditioned with the west direction of the external policy of early Sasanian Empire. It was not by chance that in the military-administrative system of Sasanyan empire Armenia retained its role until the signing of the peace treaty between emperor Probus and Varahran the First in 276. After the mentioned treaty in 276-293 Nerseh, who ruled in Armenia, already bore not the title of “The Great King of Armenia” but the title of “The king of Armenian”.